

ուսակից եւ յաջորդ Մեսրոպ եպիսկոպոսին, որ կենդանի էր դեռ այս թուին:

Այս աշակերտներն էին, որոնք նեցուկ եղան Մովսէս կաթողիկոսին ի գլուխ հանելու Հայոց Եկեղեցւոյ վերանորոգութեան մեծ գործը: Կ'ուղարկէր Մովսէս դանոնք «ի քարոզութիւն յամենայն կողմանս. որք գնացեալ հոգեբուխ քարոզութեամբ եւ բարեկրօն վարուք հաստատէին զկարգս եւ զկրօնս քրիստոսական հաւատոյս եւ զեկեղեցական աւանդութեան. վասն զի ուր եւ գնային զճշմարտութեան գործս ցուցանէին ըստ նմանութեան վարդապետին իւրեանց. շինէին զեկեղեցիս, կարգէին քահանայս եւ ընկրկեալ կործանէին զհակառակորդս ճշմարտութեան. որով զօրացեալ յառաջանայր ճշմարտութիւնն» (Դաւր. 307):

Անոնցմէ կ'ընտրէր Մովսէս կարեւոր թեմերու համար առաջնորդներ. եւ հեռաւոր աշխարհներու համար նուիրակներ: Երբ սկսաւ Մովսէս շինարարական ձեռնարկութիւնները, յատկապէս Էջմիածնի վերանորոգութիւնն, «առաքեաց զաշակերտսն իւր ի նուիրակութիւն, զի բերցեն ինչս յօժանդակութիւն նորոգման սուրբ Աթոռոյն Էջմիածնի» (Դաւր. 240): Այս օժանդակութեանց շնորհիւ յաջողեցաւ ոչ միայն Էջմիածնի վերանորոգութիւնն ի գլուխ հանել, այլ եւ Դպրատուններու համար կարեւոր թոշակն ապահովել: Մովսէս կաթողիկոսի ուղարկած